ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ թիվ ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/2-4/2020
21.12.2015թ. կնքված N ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/2-4 պետական գնման պայմանագրի

ք. Երևան **« 20 » « 02 » 2020թ.**

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղարին փոխարինող Հ. Բատիկյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ոսմար» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հ. Ոսկանյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, միասին այսուհետև՝ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, հիմք ընդունելով Կողմերի միջև 21.12.2015թ. կնքված N**ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/2-4** պետական գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 4.1.1 և 7.3 կետերը և ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1919-Ն որոշումը փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Կողմերը որոշեցին՝

1.1 Պայմանագրի 4.1 փոփոխել և շարադրել այն հետևյալ խմբագրությամբ.

«4.1 Սույն պայմանագրով Կատարողի կատարման ենթակա Աշխատանքի 2020 թվականի համար ընդհանուր գինը կազմում է 185,910,413 (մեկ հարյուր ութսունհինգ միլիոն ինը հարյուր տասներեք) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, ընդ որում.

Չափաբաժին 1՝ ՀՀ Սյունիքի մարզի Գորիսի տարածաշրջանի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների 2020թ կատարման համար 173,599,763 (մեկ հարյուր յոթանասուներեք միլիոն հինգ հարյուր իննսունինը հազար յոթ հարյուր վաթսուներեք) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն,

Չափաբաժին 2՝ ՀՀ Սյունիքի մարզի Քաշաթաղի տարածաշրջանի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների 2020թ կատարման համար 12,310,650 (տասներկու միլիոն երեք հարյուր տասը հազար վեց հարյուր հիսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը,տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները»:

1.2 Հաստատել Համաձայնագրի 2020թ. Գնման Ժամանակացույցը համաձայն հավելված 1-ի:

1.3 Հաստատել Համաձայնագրի 2020թ. Վճարման Ժամանակացույցը համաձայն հավելված 2-ի:

1.4 Հաստատել Համաձայնագրի 2020թ. Հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը սպասարկման ենթակա ավտոճանապարհների վիճակը, սպասարկման մակարդակները և սահմանային արժեքները համաձայն հավելված 3-ի:

1.5 Պայմանագրի 2.4 կետ կետը լրացնել նոր 2.4.4 ենթակետով և շարադրել այն հետևյալ խմբագրությամբ.

«2.4.4 Ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների ընթացքում ապահովել կազմակերպության ներկայացուցչի մասնակցությունը ճանապարհատրանսպորտային պատահարների դեպքի վայրում, անհապաղ տեղեկացնել պատվիրատուին դեպքի մասին, մասնակցել արձանագրության կազմմանը, հանդես գալ որպես կողմ պատվիրատուի անունից»:

1.6 Պայմանագրի 7-րդ «Այլ պայմաններ» բաժինը լրացնել նոր 7.10 և 7.11 կետերով և շարադրել դրանք հետևյալ խմբագրությամբ.

«7.10 Կատարողը պարտավոր է ապահովել ճանապարհային կահավորանքի, այդ թվում՝ նաև արգելափակոցների, վնասման դեպքերի հաշվառումը և ճանապարհային կահավորանքին պատճառված վնասների վերականգնումը՝ համաձայն 2010 թվականի նոյեմբերի 4-ի թիվ 1419-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ աղյուսակով սահմանված պահանջների:

7.11 Կատարողը ճանապարհային կահավորանքին պատճառված վնասի վերականգնման համար կարող է փոխհատուցում պահանջել վնաս պատճառող ֆիզիկական կամ իրավաբանական անձից (այդ թվում՝ ապահովագրական ընկերությունից)»:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրով սահմանված պարտավորությունները տարածվում են 2020թ հունվարի 1-ից ծագած իրավահարաբերությունների վրա և գործում են մինչև 2020թ դեկտեմբերի 31-ը ներառյալ:

2.3 Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.4 Սույն Համաձայնագիրը կնքվում է հայերեն լեզվով երկու օրինակից, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

3.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ 02815457
ՀՀ 900011012136
գլխավոր քարտուղարին փոխարինող
Հ. Բատիկյանի

/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Ոսմար» ՍՊԸ
ՀՀ, Սյունիքի մարզ ք.Գորիս,Երևանյան խճ 3
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
ՀՀ 115004676512
ՀՎՀՀ 09208107
տնօրեն
Հ. Ոսկանյան

/ստորագրություն/
Կ.Տ.

Հաստատված է
N **ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/2-4** գնման պայմանագրի
«20» «02» 2020թ. կնքված
Թիվ **ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/2-4/2020** Համաձայնագրով
Հավելված թիվ 1

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
(2020 թ. իրականացվելիք)

(ՀՀ դրամ)

Հ/Հ	Աշխատանքի անվանումը	2020թ				Ընդամենը
		I եռամսյակ	II եռամսյակ	III եռամսյակ	IV եռամսյակ	
1	2	3	4	5	6	7
1	ՀՀ Սյունիքի մարզի Գորիսի տարածաշրջանի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքներ	41,379,277	54,844,050	48,750,267	28,626,169	173,599,763
2	ՀՀ Սյունիքի մարզի Քաշաթաղի տարածաշրջանի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքներ	9,848,520	-	-	2,462,130	12,310,650

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ 02815457
ՀՀ 900011012136
գլխավոր քարտուղարին փոխարինող
Հ. Բատիկյանի

/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Ոսմար» ՍՊԸ
ՀՀ, Սյունիքի մարզ ք.Գորիս,Երևանյան խճ 3
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
ՀՀ 115004676512
ՀՎՀՀ 09208107
տնօրեն
Հ. Ոսկանյան

/ստորագրություն/
Կ.Տ.

Հաստատված է
N **ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏՄԻԳ-16/2-4** գնման պայմանագրի
«20» «02» 2020թ. կնքված
Թիվ **ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏՄԻԳ-16/2-4/2020** Համաձայնագրով
Հավելված թիվ 2

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

(2020 թ. իրականացվելիք)

(ՀՀ դրամ)

Իրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Գնման ենթակա աշխատանքների անվանումը	Աշխատանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում*												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը տարի
1	ՀՀ Սյունիքի մարզի Գորիսի տարածաշրջանի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքներ	-	28,965,494	28,965,494	79,770,112	79,770,112	79,770,112	130,348,514	130,348,514	130,348,514	173,599,763	173,599,763	173,599,763	**173,599,763**
2	ՀՀ Սյունիքի մարզի Քաշաթաղի տարածաշրջանի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքներ	-	6,893,964	6,893,964	9,848,520	9,848,520	9,848,520	9,848,520	9,848,520	9,848,520	12,310,650	12,310,650	12,310,650	**12,310,650**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ 02815457
ՀՀ 900011012136
գլխավոր քարտուղարին փոխարինող
Հ. Բատիկյանի

/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Ոսմար» ՍՊԸ
ՀՀ, Սյունիքի մարզ ք.Գորիս,Երևանյան խճ 3
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
ՀՀ 115004676512
ՀՎՀՀ 09208107
տնօրեն
Հ. Ոսկանյան

/ստորագրություն/
Կ.Տ.

Հաստատված է
N **ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/2-4** գնման պայմանագրի
«20» «02» 2020թ. կնքված
Թիվ **ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/2-4/2020** Համաձայնագրով
Հավելված թիվ 3

Չափաբաժին 1

ՀՀ Սյունիքի մարզի Գորիսի տարածաշրջանի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքներ

Ավտոճանապարհի անվանումը և պիկետաժը	Ավտոճանապարհի տեխնիկական կարգը	Սպասարկվող հատվածների ընդհանուր երկարությունը /կմ/	Ճանապարհի առկա վիճակի ծածկագիրը	Սպասարկման պահանջվող մակարդակ	Սպասարկվող հատվածի երկարությունը /կմ/	Միավորի գինը /հազ. դրամ/	Ընդամենը /հազ. դրամ/
1	2	3	4	5	6	7	8
Պահպանման ժամանակաշրջանը՝ ՁՄԵՌ							
Մ2, Երևան-Երասխ-Գորիս-Կապան-Իրանի սահման կմ 219,6-կմ 278,1	Միջպետական II-IV	58.50		Լավ	51.50	453.944	23378.116
Մ12, Գորիս- Ա Հ սահման կմ 0-կմ28,5	Միջպետական II-IV	28.50		Լավ	28.50	453.944	12937.404
Հ-46, Մ2-Թաթև-Աղվանի-Մ2 կմ0-կմ35,0	Հանրապետական II-IV	35.00		Միջին	35.00	327.146	11450.110
Հ-94, Մ2/Գորիս/-Հ-46/Շինուհայր/ կմ 0-կմ 11,1	Հանրապետական II-IV	11.10		Միջին	11.10	327.146	3631.321
Մոտեցում Գորիսի օդանավակայանին կմ0-կմ1,0	Հանրապետական II-IV	1.00		Միջին	1.00	327.146	327.146
Ընդամենը		134.10			127.10		51724.097
Պահպանման ժամանակաշրջանը՝ ԳԱՐՈՒՆ-ԱՄԱՌ-ԱՇՈՒՆ							
Մ2, Երևան-Երասխ-Գորիս-Կապան-Իրանի սահման կմ 219,6-կմ 278,1	Միջպետական II-IV	58.50	Երաշխ.Մե(0)	Լավ	14.4	489.624	7050.586
			Լավ ՄԼ(I)	Լավ	8.40	1034.214	8687.398
			Բավարար ՄԲ(II)	Միջին	16.70	1700.750	28402.525
Մ12, Գորիս-Ա Հ սահման կմ 0-կմ28,5	Միջպետական II-IV	28.50	Լավ ՄԼ(I)	Լավ	2.30	1034.214	2378.692
			Բավարար ՄԲ(II)	Միջին	26.20	1700.750	44559.650
Հ-46, /Մ-2/-Թաթև-Աղվանի-Մ2 կմ0-կմ35,0	Հանրապետական II-IV	35.00	Երաշխ.Մե(0)	Լավ	5.70	453.749	2586.369
			Լավ ՀԼ(I)	Լավ	8.20	942.444	7728.041
			Բավարար ՀԲ(II)	Միջին	10.00	1509.369	15093.690
Հ-94, Մ2/Գորիս/-Հ-46/Շինուհայր/ կմ 0-կմ 11,1	Հանրապետական II-IV	11.10	Բավարար ՀԲ(II)	Բավարար	4.00	1347.179	5388.716
Մոտեցում Գորիսի օդանավակայանին կմ0-կմ1,0	Հանրապետական II-IV	1.00	Վատ		0.00	1347.179	0.000
Ընդամենը		134.10			95.90		121875.66
Ընդամենը Գորիսի տարածաշրջանով							173599.76

Հավելված 2

ՀՀ Սյունիքի մարզի Քաշաթաղի տարածաշրջանի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքներ

Ավտոճանապարհի անվանումը և պիկետաժը	Ավտոճանապարհի տեխնիկական կարգը	Սպասարկվող հատվածների ընդհանուր երկարությունը /կմ/	Ճանապարհի առկա վիճակի ծածկագիրը	Սպասարկման պահանջվող մակարդակ	Սպասարկվող հատվածի երկարությունը /կմ/	Միավորի գինը /հազ. դրամ/	Ընդամենը /հազ. դրամ/
1	2	3	4	5	6	7	8
Պահպանման ժամանակաշրջանը՝ ՁՄԵՌ							
Մ12, Գորիս-Ստեփանակերտ կմ 28.5-կմ83,5	Միջպետական II-IV	55.00		Լավ	55.00	223.830	12310.650
Ընդամենը		55.00			55.00		12310.650
Ընդամենը Քաշաթաղի տարածաշրջանով							12310.650

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ 02815457
ՀՀ 900011012136
գլխավոր քարտուղարին փոխարինող
Հ. Բատիկյանի

/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Ոսմար» ՍՊԸ
ՀՀ, Սյունիքի մարզ ք.Գորիս,Երևանյան խճ 3
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
ՀՀ 115004676512
ՀՎՀՀ 09208107
տնօրեն
Հ. Ոսկանյան

/ստորագրություն/
Կ.Տ.